



“ԹՈՂ ՏՈՒԻՔ ՄԱՆՔ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՏԻ ԳԱՆ.” ԴՈՒԿ. ԺԸ. 16:

ՀԱՏՈՐ ԻԶ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՅՈՒՆԻՍ 1, 1897


ԹԻՒ 6



ԵԿԵՂԵՑԻ ԵՐԹԱԼ

Կան քրիստոնէի անուն կրողներ որ երբեք չեն խորհիր եկեղեցի երթալ. կան ուրիշներ որ միայն տօնի օրեր կ'երթան, կամ երբ սովորականէ դուրս պերճախօս քարոզիչ մը լսելու յոյս ունին, և կամ անսովոր կերպով աղուոր երգ կ'երգուի եկեղեցիին մէջ. Բայց, փառք Աստուծոյ, կան ուրիշներ որ չեն խորհիր եկեղեցիէն բացակայ գտնուիլ կիրակի օրերը եթէ կարող են երթալ, ինչպէս չեն խորհիր հացի սեղանէն բացակայ գտնուիլ կերակուրի ժամանակ. Ասոնց վրայ է եկեղեցւոյ հովիւին յոյսը, ասոնք կը կազմեն եկեղեցիին ոյժը: Ասոնք

Ֆիզիքապէս ոյժ ունեցողները չեն, այլ շնորհաց միջոցները սրտանց սիրողներն են: Այս պատկերին մէջ կը տեսնէք ֆանատացի քրիստոնեաներ որ չեն ուզեր զրկուիլ իրենց եկեղեցիին պաշտամունքէն, թէպէտ ջուրը կոխած է գեղը: Ծերեր և դեռահասներ նաւակներով եկեղեցի կ'երթան, վասն զի իրենց հօգիները անօթի են կենաց հացին:



“ԱՐՏԵՐԷՆ ԱՆՅՆԻՒ”

“Ես արտերէն կ'երթամ և ձեզմէ առաջ դպրոց կը հասնիմ,” ըսաւ տղայ մը իր ընկերին որուն հետ մէկտեղ դպրոց կ'երթար: “Մի ըներ

Աշոտ, ինչու որ պէտք պիտի ըլլայ ճահիճէ անցնիլ և կրնայ ըլլալ որ ոտքերդ անոր մէջ ընկղմին: Ասկէ դատ դիտես որ Պրն. Բարսեղ չուզեր որ տղաք իր արտին մէջէն անցնին: Շիտակ ճամբան աւելի աղէկ է, թէպէտ քիչ մը հեռու կ'իյնայ,” ըսաւ ընկերը: Աշոտ իր բարեկամին ըսածին ահանջ չկախեց, հապա ցանկին վրայէն ներս նետուեցաւ և սկսաւ առագ արագ վազել արտին մէջէն: Ես կը դիտէի զանիկա և իր բարեկամը, և որովհետեւ դպրոցը պարզ կ'երևնար առջևս, կրնայի տեսնել թէ այդ տղաքը ի՞նչ պիտի ընէին: Աշոտ շուտով մը ճահիճին հասաւ, և իրօք դժուար եղաւ իրեն համար արագ քայլել. քայլերը բաւական կամայեցող: Յետոյ մէջ մը ցատկեց. ետքը դրեթէ ինչ կաւ, բայց մացառին մէկ ճիւղէն բռնելով ազատուեցաւ տիղմին և ցելին մէջ խոր ընկղմելէ: Վերջապէս անցաւ ճահիճէն և դպրոց հասաւ իր բարեկամէն քիչ մը ետքը: Չեմ գիտեր թէ ճիշտ ի՞նչ խօսեցան անոնք իրարու հետ, բայց տեսայ որ Աշոտ իր կօշիկները կը հանէր շուրջով լեցուածի պէս, մինչ բարեկամը սպասեց անոր մինչև որ դպրոցէն ներս մտաւ:

Այդ օրուան մէջ մտածութեանս առարկայ եղաւ այդ դէպքը, և միտքըս եկաւ ոմանց ըրածը, որ կը ջանան «արտերէն անցնիլ» կամ կարճ ճամբաներ բռնել այսինչ փափաքելի դիրքերուն հասնելու համար, և այնքան կ'արտորան որ չեն ուզեր ուրիշներուն գացած սպասով և բանուկ ճամբէն երթալ:

Դպրոցին մէջ ուսանողներ երբեմն կը խորհին թէ աւելի շուտով կրնան ընթացաւարտ ըլլալ իրենց դասերուն

մէջ դժուար օրինակներու կամ խորթ թիւն խնդիրներու վրայէն ցատկելով, կամ ընկերներուն սորված կամ գրած դասերը ընդօրինակելով:

Ուրիշներ արհեստ մը կամ գործ մը սորվելու այնպէս կ'արտորան որ ժամանակ չեն տար անոր սկզբունքները սորվելու՝ այնատուր թիւնով և մեծ խնամով, և այսպէս կարճ ճամբէն անցնելու ջանացած ժամանակ ցաւայի կերպով անյաջող կ'ելլեն գործին ետ թիւնը սորվելու մասին:

Կան այնպիսիներ ալ որոնք հարստութիւն դիզելու այնքան կ'աճապարեն որ ապօրինաւոր միջոցներու կը դիմեն, արգիլուած ճամբաներէ կ'երթան և անոր համար ամօթով կը մնան շատ անգամ: Երբեմն տղաք կը ջանան չափահաս մարդու պէս երևնալ, մարդոց անապահով ունակութիւններուն հետեւելով: Բայց աւելի աղէկ է հին, ճշմարիտ և ապահով չափողներէ և հողածութիւնով և աշխատութեամբ քաջելով աղնիւ մարդկութեան հասնիլ: Մաքուր և սուրբ կեանքի հասնելու համար «արտերէն անցնիլ» չըլլար: Գիտութիւն սորվելու համար կարճ և դիւրին ճամբայ չկայ: Ապրելու համար կ'արժէ շիտակ և օրինաւոր կերպեր գործածել թէպէտ յոգնիլ և քրտնիլ հարկ ըլլայ: Աւելի կարճ ճամբաները միշտ ճահիճներով, ցեխերով լեցուն և երբեմն աւելի վտանգաւոր են: Շիտակ ճամբան միշտ ամենէն աղէկը և յաջողելու համար ամենէն կարճն է:


Ա.

ՇԱՐԼՈՒՍ ՄԸՐԱՅԱ ԹԵՔԸՐ

Մերունի տիկինը որուն պատկերը կը տեսնէք հոս, ասկէ քսան երեսուն տարի առաջ ծանօթ էր Անգղիերէն կարդացող պզտիկներու: Քիչեր անոր չափ ծանօթ էին: Քառորդ դար անոր գրիչը ժրութեամբ կը գրէր դեռ ռահսաներու համար սիրուն և հրապուրիչ պատմութիւններ, որոնց բոլորին նպատակն էր առողջ բարոյական ներշնչել և կրօնական հրահանգներ տալ: Յիշեալ տիկինը հրատարակած գիրքերը խիստ շատ էին: Ինքը շատ տարիներ խմբագիրն եղաւ հանդէսի մը որուն անունը կը թարգմանուի

«Ուսուցիչ Քրիստոնեայ Երիտասարդաց»: Կը յիշենք թէ դեռահաս տղաք և աղջիկներ Ինչպէս բարդաւոր կը սեպէին իրենք իրենք ասկէ 40 տարի առաջ երբ Օրիորդ Թըրքըրի գրչէն ելած նոր գիրք մը կը ստանային:

1875 ին երբ բարեկամներուն մահուամբ ազատ մնաց ընտանեկան պարտականութիւններէ, թէպէտ արդէն 54 տարեկան էր, որոշեց Հնդկաստան երթալ իրրև միսիոնարուհի, և 18 տարի անձնանուիրութեամբ այնպէս անցաւ այն երկրին տգէտ կանանց համար: Այդ մասին իր փորձառու



թեան վրայ սա վկայութիւնը տուած է, թէ երբ մեր անձերը կը նուիրենք Տէրոջ ծառայութեանը, Նա մեր երջանկութեան հոգ կը տանի մեր կըրցածէն աւելի աղէկ:

ՎԱՐԳԱԳՈՅՆ ԱՅՏԵՐՈՎ ՏՂԱԲ

Ինչ մեծ տարբերութիւն կայ թարմ և վարդագոյն, կարմիր խնձորի նման այտերով տղոց և տղոյն և պայծառութենէ, գեղեցկութենէ զուրկ երեաներով տղոց մէջտեղ: Ո՛վ գիտէ թէ ինչ է տարբերութեան պատճառը: Սակայն կայ բան մը զոր ամէն մարդ գիտած է: Գրեթէ ամէն տղայ որ տնէն դուրս կ'ելլէ ցուրտ ձմեռ

ուան եղանակին մէջ, վարդագոյն այտերով ներս կու գայ: Նայինք կըրնա՞նք հասկնալ թէ ինչ է տղոց այտերը վարդագոյն ընողը:

Երկու տեսակ ներ ճամբաներ կամ խողովակներ կան որ կ'անցնին մարդկային մարմնին ամէն մէկ մասին մէջէն: Անոնք կը սկսին սրտէն և կը պտտին բոլոր կազմութեան մէջ ամէն կողմ: Այս ճամբաներուն մէկ տեսակը կը կոչուի Շնչերակներ, և ասոնց միջոցաւ սիրտը, որ կը զգանք թէ կը բաբախէ մեր կուրծքերուն մէջ, արիւնը կը մղէ մարմնին ամէն կողմը: Այս շնչերակները սովորաբար խորունկ դուրսած են մին մէջ որպէս զի ապահով մնան, վասն զի եթէ շնչերակ մը պատուելու ըլլայ, արիւնը այնքան արագութեամբ դուրս կը վազէ որ մարդ շուտով կը մեռնի: Եթէ տեսնէք վէրք մը որմէ արիւն կը ցատկէ քիչկ քիչկ սրտին ամէն բաբախելուն, շնչերակին արիւնն է այն, և եթէ արիւնը շուտով չըտրուի, վիրաւորեալը վերջապէս կը մեռնի արիւնը կորսնցնելով: Շնչերակներէն վազած այս արիւնը բաց կարմիր է, վասն զի թոքերուն մէջ գտնուած թթուածինէն մասնակցած է, և ուստի բաց կարմիրի փոխուած է փոխանակ մութ կարմիրի, ինչպէս էր երակներուն մէջ գտնուած ժամանակը: Թեքու արիւնին մէջ գտնուած երկաթն է որ կարմիր գոյն կու տայ անոր: Այս բաց գոյն կարմիր արիւնը կ'անցնի բոլոր շնչերակներուն մէջէն որոնք կը բաժնուին և կը ստորաբաժնուին, և քանի կ'երթան կը բարակնան կը նրբանան, մինչև որ հազիւ կը տեսնուին: Այնուհետև արիւնը, որ այսպէս գացած է մարմնը սնուցանելու, կը բեռնաւորի ապականեալ և մեռած նիւթերով, և մութ կարմիր գոյն մը կ'առնէ և ետ կու գայ դարձեալ երակներուն մէջէն որ մարմնին մակերեսին մօտ կը գտնուին. և այսպէս նորէն ետ կ'երթայ թոքերուն, ուր կը չփուի օդին հետ և նորէն բաց կարմիր կը փոխուի և դարձեալ շնչերակներուն միջոցաւ կը զրկուի մարմնին ամէն կողմերը:

Արդ, եթէ մէկը չընչեր առատ, աղէկ մաքուր օդ, այս արիւնը չկար մըրիւր պէտք եղածին չափ, և սիրտն ալ աղէկ կերպով չըրկեր զանկա շնչերակներուն միջոցով, և ուստի այ տերը ստժոյն կ'ըլլան, և մարդիկ տկար և հիւանդոտ՝ փոխանակ զօրաւոր, առոյգ և վարդագոյն ըլլալու, ինչպէս պէտք էր որ ըլլային: Ուրեմն ստժոյն երեսներու, ճերմկած չըրթունքներու և այտերու դեղն է առատ, աղէկ, պայծառ և մաքուր օդը: Արդ, ցուրտ եղանակի մէջ օդը աւելի խիտ է քան տաք եղանակի մէջ, և աւելի շատ թթուածին կը պարունակէ: Ահա այս է պատճառը որ մարդիկ ցուրտ եղանակի մէջ աւելի վարդագոյն և աւելի առողջ կ'երևան քան տաք եղանակի մէջ:

Մարդ հինգ վայրկեան չկրնար ապրիլ առանց օդի, և անոնք որ իրենց պէտք եղած օդին կէսը կամ երկու երրորդը միայն կը շնչեն, չեն կրնար զօրաւոր մարմինի, աղէկ ախորժակի, վարդագոյն այտերու, ուժեղ մասններու և քաջաւորող կազմութեան սպասել: Ուրեմն, տաք, նայեցէք որ լայն հանդերձներ հագնէք, առողջ ապրիք, բայց գլուխ և բոսիկ պտտիք երբեմն, խորունկ և երկար շնչէք, բայց բերաններնիդ դոց պահելով: Վատառողջ կերակուրներէ զգուշացէք, պարզ ապրեցէք, Աստուծմէ վախցէք և արդարութիւն գործեցէք, և այն ատեն պիտի մեծնաք և ըլլաք զօրաւոր մարդիկ և քաջաւորող կիներ, պայծառ այքերով, վարդ այտերով և ուրախ սիրտերով:

ՔԱՐԱՏԱՆ ԱՆՏԱՌ

Տարիներ առաջ ձմեռ մը անցուցինք Ամերիկայի այն մասին մէջ որ հիմա Հիւսիսային Տարթա Նահանգ կը կոչուի: Այդ տեղը գրեթէ երբեք ծառ չունէր. բայց երբ հոն կը պտտէինք, շատ անգամ կը հանդիպէինք նշաններու որ կը ցուցնէին թէ ժամանակաւ անտառներ ծածկած էին այն կողմերը: Հիմա մեր քով ունինք փայտի քանի մը քարացած կտորներ, որոնք մեր պտտած ատենները ժողոված ենք: Ճշմարիտ չէ ծառին քարի

դառնալը. բայց քանի՛ կը փտի բուսական նիւթը, անոր տեղը հանքային նիւթ կը մտնէ: Քարը ճիշդ մանրաթերեւ կազմութիւն կ'ունենայ և ճիշդ փայտի երևոյթ: Արեւմտեան Ամերիկայի մէջ տեղ տեղ ընդարձակ անտառներու քարացած մնացորդներ կան քարէ խոշոր ծառերով, ասոնցմէ դատ նաև ծառերու նման բաներու նշաններ: Հոս ներկայացուած քարացած անտառը Սկոթլոնդ մէջ կը գտնուի:

«ԵԹէ ՊԵՏՔ ԸԼԼԱՐ ԼՈՂԱԼ»

Ի՞նչպէս դժուար կը հասկնանք թէ աւետիսը, զոր հրեշտակները երգեցին



Բեթլէհեմի մէջ, իրօք կը նշանակէր ուրախութիւն բոլոր ժողովուրդին, խաղաղութիւն երկրի վրայ և հաճութիւն մարդոց մէջ:

Շատ տարիներ առաջ Նոր Զելանտացի աղջիկ մը Անգղիա բերուեցաւ դաստիարակուելու համար: Աղջիկը ճշմարիտ քրիստոնէսայ մը եղաւ: Երբ իր հայրենիքը պիտի վերադառնար, իր խաղի ընկերներէն ոմանք ջանացին համոզել զանիկա որ չերթայ: «Ինչո՞ւ համար Նոր Զելանտա դառնաս նորէն: Գուն հիմա Անգղիոյ սովորեցար: Կը սիրես անոր հովանաւոր փողոցները և կանանց դաշտերը: Քու առողջութեանդ շատ աղէկ եկած է Անգղիոյ կլիման: Ասկէ գատ կարելի է որ ճամբան նաւաբեկութեան հանդիպիս Ուիլիանսոնի վրայ: Կարելի է որ սպանուիս քու ժողովուրդէդ և անոնց

կերակուր ըլլաս. հիմա ամէն մարդքեզ մոռցած է հոն» ըսին: «Ի՞նչ» ըսաւ, «կը կարծէք թէ այն աւետիսը կրնամ պահել իմ ներսի դիւ միայն ինծի համար: Կը կարծէք թէ կրնամ գոհ ըլլալ միայն ինծի համար թողութիւն, խաղաղութիւն և յաւիտենական կեանք ստանալով, և պիտի չերթամ՝ պատմել իմ սիրելի հօրս և մօրս թէ ի՞նչպէս անոնք ալ կրնան ստանալ զանոնք: Իս պիտի երթայի հոն մինչև անգամ եթէ պէտք ըլլար լողալ: Մի աշխատիք զիս արգիլելէ, վասն զի անշուշտ պէտք է որ երթամ և իմ ժողովուրդիս պատմեմ փրկութեան աւետիսը»:

ԳԻՒՑԱԶՆ ՄԸ

Քանի մը տարի առաջ Զուիցերիայի մէջ ճանապարհորդութիւն ընող մէկը կրնար տեսնել հրապուրիչ փոքրիկ գիւղ մը, որ հիմա, աւա՛ղ, ա՛լ չունի գոյութիւն: Օր մը հրդեհ մը պատահեցաւ և քանի մը ժամու մէջ գիւղին սիրուն փոքրիկ տունները բոլորովին մոխիր դարձան: Խեղճ գեղացիները ասդին անդին կը վաղէին իրենց ծունկերը ծեծելով և լալով իրենց կորսուած տնակներուն և այրած արջառներուն ոսկորներուն վրայ:

Այդքատ մարդ մը իր դրացիներէն աւելի մեծ վիշտի մէջ էր: Իրեն ալ տունը և կովերը գացած էին, բայց գացած էր նաև իր որդին, վեց եօթը տարեկան փայլուն տղայ մը: Կու լար և երբեք չէր ուղեր լսել միտիմարական խօսքեր: Բոլոր գիշերն անցուց աւետակներուն մէջ ողբալով և հաւաչելով, մինչ իր ծանօթները մերձակայ գեղերուն մէջ ապաստանած էին:

Սակայն ճիշդ երբ արշալոյսը ծագեցաւ, իրեն շատ ընտանի ձայն մը լսեց, և նայելով տեսաւ իր սիրելի կովը որ արջաուի խումբին առջև ինկած կու դար, և ահա անոնց ետևէն կու գար նաև իր փայլուն աչքերով փոքրիկ որդին:

«Ո՛հ, որդեակ, որդեակ», աղաղակեց, «իրաւ ո՞ղջ ես» «Այո», հայր: Երբ կրակը տեսայ, վաղեցի դուրս հանեցի մեր կովերը և արօտը տարի» «Գուն գիւցազն մըն ես», գոչեց հայ

ըր: Բայց տղան ըսաւ, «Ո՛հ, ո՛չ, դիւ-
ցաղն այն է որ զարմանալի գործ մը
կ'ընէ: Ես կովերը մէկ կողմ տարի
վան դի անոնք վտանգի մէջ էին, և
ես գիտէի թէ ընելու աղէկ բանն այդ
էր:»

«Ո՛հ,» աղաղակեց հայրը, «դիւ-
ցաղն է այն որ աղէկ գործ մը յարմար
ժամանակին կ'ընէ:»

ՉՈՐՍ ԽՆՁՈՐՆԵՆԻՆԵՐԸ

Օգտակար է գործերն աղէկ կա-
տարելը, և օգուտ մը չկայ զանոնք
հարևանցի կատարելէն: Անգղիներէն
թերթի մը մէջ հետեւեալը կը գրէ
թղթակից մը.

Շատ տարիներ առաջ մարդ մը ու-
ղեց գեղեցիկ պարտէզ մը ունենալ:
Ուտի քանի մը մատաղատունկեր
(ֆլորան) բերել տուաւ, գիտնալով թէ
այնչափ պիտի չապասէր իր պարտէզին
եթէ արդէն բաւական մեծցած ծա-
ռեր տնկէր: Սակայն դժբաղդարար
ծառերը ճիշդ այն ատեն հասան երբ
մարդը պարտաւորած էր տնէն դուրս
ելլել քանի մը օրուան համար: Վախ-
ցաւ թէ անոնք պիտի չդիմանային
եթէ ուշ տնկուէին, և սակայն չէր
կրնար սպասել անոնք տնկելու հա-
մար: Ճիշդ այդ ատենը մարդ մը ե-
կաւ և գործ ուղեց:

«Պտուղի ծառ տնկել գիտե՞ս,»
հարցուց տանուտէրը: «Այո,» ըսաւ
մարդը: «Ուրեմն, կեցիք և այս փոք-
րիկ խնձորենիները տնկէ: Կ'ուզեմ
պտուղի պարտէզ մը չինել, և ծառե-
րուն տնկուելու տեղերը որոշած և
մէյմէկ քար դրած եմ:»

Շատ չանցած ծառերուն տէրը դար-
ձաւ իր ճամբորդութենէն և գնաց
նայիլ իր պարտէզը: Երկու օր բա-
ցակայ գտնուած էր: «Այս ի՞նչ է,
միայն չորս ծառ տնկեր ես,» ըսաւ:
«Միայն չորս հատ տնկելու ժամանակ
ունեցայ,» պատասխանեց միւսը: «Ես
մեծ ծակեր փորեցի, որպէս զի ծա-
ռերուն արմատները կարող ըլլան
երկննալ և հեռուները տարածուիլ:
Պարարտ հող բերի անտառներէն,
որպէս զի ծառերը աղէկ սնունդ ըն-
դունին: Ծառերը չիտակ դիրքով
տնկեցի, և բացուած ծակերը զգու-
շութեամբ լեցուցի: Այս բաները բո-
լոր ժամանակա առին, բայց այս չորս
ծառերը ամէնն ալ աղէկ տնկուած
են:» «Շատ դանդաղ կերպ է այդ-
ինձի համար, ես բոլոր պարտէզը
կրնամ ծառերով լեցնել մէկ օրուան
մէջ:»

Այսպէս տանուտէրը գործի սկսաւ
և ծառերը իր կերպով տնկեց: Ծա-
կերը ո՛չ բաւական մեծ բացաւ և ո՛չ
բաւական խորունկցուց, անոր համար
արմատներուն փոքրիկ ճիւղերէն շա-
տը կտորեցան երբ ծառերը ծակե-
րուն մէջ դրաւ: Չալխատեցաւ եր-
թալ բերել կակուղ պարարտ հող

ծակերը լեցնելու համար, և ուտի
ծառերը իրենց անհրաժեշտ սնունդը
չէին կրնար առնել: Այն խեղճ մա-
տաղատունկերը ժամանակ մը ապրե-
ցան, բայց երբեք շատ չզօրացան,
երբեք աղէկ պտուղ չբերին, և վեր-
ջապէս կտորուեցան: Ի վերջոյ պարտե-
զին մէջ միայն մարդուն տնկած չորս
ծառերը մնացին որոնք այնքան հա-
ւատարմութեամբ և խնամով տնկուած
էին: Այս չորս ծառերը դեռ կան հի-
մա և շատ ժամանակէ հետէ ազնիւ
և խոշոր խնձորներ կը բերեն:

**ՓՈՒՔՐԻԿ ԱՂԶԱԿՆ ՄԸ
ԱՌԱՏԱՍՍՐՏՈՒԹԻՒՆԸ**

Հիմա որ Անգղիական ազգը կը
պատրաստուի վերթորիա թագուհի-
ւոյն երկարատե և բարգաւաճ իշխա-
նութեան 60 երորը տարեդարձը օտ-
նելու, վայելուչ է պատմել անոր
մանկութեան ժամանակի մէկ պարզ
փոքրիկ դէպքը, որ կը ցուցնէ թէ ա-
նոր այն բարեմասնութիւնները որ զա-
նիկա սիրելի ըրին իբրև թագուհի
արդէն յայտնի կը տեսնուէին երբ
փոքրիկ իշխանուհի մըն էր:

Այս փոքրիկ օրիորդը եօթն ութ
տարեկան եղած ժամանակը մասնա-
ւոր սէր ունէր պուպրիկներու (պօպի),
և հրաման առած էր բաւական թուով
պուպրիկներ գնել, միտ այն պայմա-
նով որ անոնց աղէկ հող տանէր, իր
ձեռքովը լուար և հագուեցնէր զա-
նոնք, և շատ մաքուր և շատ վայել-
լուչ հանդերձներ հագցնէր անոնց:
Պուպրիկներուն հանդերձները կը դը-
նէր՝ ժրութեամբ ուսման հետեւելուն
իբրև վարձ ընդունած ստակովը:

Անգամ մը իրենց տան մօտ գրա-
նուող խանութի մը մէջ պուպրիկ մը
տեսաւ և շատ փափաքեցու գնել
զանիկա: Գժբաղդարար իր ամանակն
վարձքը ծախսած էր, և իր քով
գտնուած ստակը որ կէս ամանակ
էր՝ չէր բաւեր զանիկա գնելու: Բայց
փոքրիկ իշխանուհին չվհատեցաւ: Տու-
նը պատմեց բանը, և իրեն հրաման
արուեցաւ որ երթայ խանութպանին
ըսէ որ պուպրիկը պահէ իրեն համար:
Խանութպանը, որ կը ճանչնար իշխա-
նուհին, սիրով հաւանեցաւ. և փոք-
րիկ օրիորդը պուպրիկը ապահով վե-
ճակի մէջ դրած զգաց:

Երջանիկ օր մըն էր իրեն համար
երբ վեց չիլիմն իր ձեռքը՝ խանութ
գնաց այն գանձը ստանալու: Ստակը
վճարեց և պուպրիկը իրեն յանձնուե-
ցաւ. յետոյ փոքրիկ աղջիկը դէպ ի
դուռը դարձաւ: Բայց տակաւին ոտ-
քը դռնէն դուրս չդրած, տեսաւ
խեղճ կերպարանքով մարդ մը որ բա-
ցաւ չրթունքները անոր խօսիլ ուղե-
լով, բայց նորէն գոցեց առանց բան
մը բռնել համարձակելու: Մարդը մէկ
կողմ քաշուեցաւ ճամբայ տալով որ
աղջիկը անցնի: Մարդուն այտերը
ներս քաշուած էին և չրթունքները կը

դողդղային և պաղատագին կը նայէր:
«Ինձի խօսիլ կ'ուզես,» հարցուց իշ-
խանուհին: «Ես շատ անօթի եմ,» ը-
սաւ մարդը դողդոջուն ձայնով, «եթէ
սովամահ ըլլալու վիճակի մէջ չգրա-
նուէի, օգնութիւն պիտի չխնդրէի:»
«Կը ցաւիմ որ ստակ չունիմ,» ըսաւ
փոքրիկը, «եթէ ոչ...» Մարդուն
չրթունքները դողդղալով՝ «Շնորհա-
կալ եմ,» ըսաւ և երբ սկսաւ մէկ
կողմ քայլել, աղջիկը «կեցի՛ր» աղա-
ղակեց, և ետ դառնալով նորէն խա-
նութ մտաւ և ըսաւ խանութպանին,
«Կ'ուզէ՞ք պուպրիկը ետ առնել և
քիչ մը ատեն ալ ձեր քովը պահել
ինձի համար:» «Ո՞նչույա ետ կ'առ-
նեմ և ստակը ձեզի ետ կու տամ,»
պատասխանեց մարդը:

Աղջիկը առաւ ստակը և դուռը
գնաց: Եւ բոլորը դրաւ սովատանջ
մարդուն ձեռքին մէջ: Մարդը վայր-
կեան մը ապշութեամբ նայեցաւ ստա-
կին վրայ, և աչքերը արցունքով լեց-
ուեցան: «Շուտով գնա և ուտելու
բան մը առ.» ըսաւ աղջիկը:

«Այո, Օրիորդ, այնպէս պիտի ը-
նեմ: Ստուած օրհնէ ձեզ ձեր կեան-
քին բոլոր օրերուն մէջ, և յաջողէ
ձեր ըրած ամէն մէկ գործը,» ըսաւ
մարդը: Յետոյ երբ մէկ կողմ դար-
ձաւ երթալու համար, ապէս շնչեց.
«Եթէ Ամենակարողը ձեզ թագուհի
ընէ, ձեր արժանիքէն աւելի վար-
ձատրած պիտի չըլլայ ձեզ:»

ՊԱՏԱՍԽԱՆ ԱՊՐԻԼԻ ՀԱՆԵԼՈՒԿԻՆ

Ն	Ե	Ղ	Ո	Ի	Թ	Ե	Ա	Ն
Ի	Շ	Ա	Մ	Ե	Ղ	Ո	Ի	
Կ	Ր	Կ	Ն	Ա	Կ	Ի		
Ո	Ի	Ր	Բ	Ա	Յ			
Դ	Ա	Ն	Ո	Ի	(Բ)			
Ե	Ս	Ք	Ո	(Հ)				
Մ	Ե	Բ						
Ո								
Ս								

Բանդակներն են՝ ՆԻԿՈՒԵՄՈՍ, ՍՐՔՈՒԹԻՒՆ:
Լուծեցին, Կ պոլս. — Արաքսի Միտասեան,
Արփինիա Կէլիլեան, Գ. Առաքել Գարբէլեան,
Ե. Կ. Գերովզեան, Վասն Ջ. Թովմասեան, Օն-
նիկ Ս. Թիմուրեան, Գրիգոր Ս. Գարբէլեան,
Արթիւնուպոլս. — Մ. Կրօն Մ. Չաքրեան: Ա-
տաբազար. — Վերգինիա Յ. Մարգարեան, Սեր-
վադ Կ. Պողոսեան, Նոնի Թ. Միտասեան: Օր-
տու. — Գարեգին Պ. Անդրեասեան, Նշան Յ.
Անդրեասեան, Երուանդ Աննահայտ: Էտեմէլ.
— Անթուստ Մ. Երկանեան, Արամայշ Փ. Տալ-
գրանեան, Յակոբոս Ք. Տալգրանեան: Մարտաւ.
— Մէջկերպ Գ. Պետրոսեան, Երուարդ Պետրո-
սեան, Հոյկ Ղ. Ներսիսեան: Սերասիւս. — Պետ-
րոս Մ. Մուշեղեան: Ստակ. — Բովհանէս Ս.
Մելիքեան, Կարապետ Գ. Մելիքեան: Սեօզդ.
— Զարուհի Ա. Ալեք.

Ամբիկայի Մեծ... ԿԻՍՏԱՆԲՈՒԼԻ
Տնօրէն—Պ... ԱՐՆԸՄ
Ֆինանսըլա...
ԿԻՍՏԱՆԲՈՒԼԻ
Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. ՅԱՌՈ ԳՕՍԱԶԱՆ